



Ի ՎԱՂԱՄԵՌԻԿ ՍԻՐԱՄԵՌԻՆԴ ՈՐԴԵԱԿՆ

ՊԵՏՐՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

ՏՐՏՄԱԶԳԵԱՅ ՀՕՐ

Ե Ղ Ե Ր Գ

*Մատիւր, Մուսայդ իմ թախճադին, ի քնար տըխուր արտօսարալից՝
Զհառաչանաց ցաւոց սրբոյ երդել ընդ իս զողբ տրտմալից .
Անգերժ մըւայլ աղջամըղջին ըզցուրտ գըլխովս մածեալ բոլոր՝
Անմըխիթար զիս կաշկանդէ յաղէտ մահու սրտատուչոր :*

*Շառաչ փողոյն հընչեալ յանկարժ զանդարձ հրամանն ճակատադրին՝
Ըզմահառիթ ազդէր զմրդւոյս յետին ողջոյնըս հրաժեշտին ,
Հեղձամըղձուկ խուռըն թափեալ յաչացս արտօսը յորդահոսան՝
Զվաղամեռիկ Պետրեայ մանկանն իմ ողբալ մահ եղերական :*

*Քանի, աւաղ, դառն է սրտիս ահեղ վըճիռն աստուածային՝
Որ ճախը 'ի թեւս անդարձաբար յափըշտակեաց զիմ տարփալին ,
Մինչ տակաւին աչք ի կական ես խնդրէի կարօտահար
Գէթ ըզյետինըն տալ համբոյր շառագունեալ չըրթանցն ի լար :*

- Ո՛վ դու Պետրէ, զիարդ թրուհար ի նորատունկ տիս հասակիդ՝
Բզմանկութեան այն ինչ զաւուրըս վայելեալ դեռախրթիթ.
Որ ցանկայի յամայր կենօք դիտել ըզքո արեւ պայծառ՝
Ի՛բր յեղակարծ ընդ մանգաղաւ հընձեալ տեսի դքեզ ծագկաբար:

Այլ, ո՛հ, ընդէր աղիողորմ ողբամ ըզմահն անմըխիթար,
Մինչ Եփսոսի հանգեաւ ի ծոց անմահ ոգին լուսապատար.
Եւ յօթեվանս արփիաճեմ աղանակերպ ճախրասլաց
Յանտըխրական եմուտ յաւերժ յամբիժ ի խումբըս հրեշտակաց:

Շատ ինձ իցէ ի դառնաղէտ անդունդ ցաւոցըս խորասոյզ՝
Ըզքաղցրաւոր լըսել ըզձայն քո տակաւին յունկըն հոգւոյս,
Առ սընարաւ երբ ցուրտ վիմիդ եկից բազմեալ կալ թախժագին
Ըզմահացու մխրոցդ աճիւն ոռոգանել ց'օր իմ յեաին:

ՊՕՂՈՍ Պ. ԱՂԱՀՎԷՐՏԻ

